«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ և ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/07»

ք. Գավառ «31» մայիսի 2019թ.

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Սմարթլայն» ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածը. Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 60 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 60 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **766 644 (յոթ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր քառասունչորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառող Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմեր պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև ա պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ	«Սմարթլայն» ՍՊԸ
ՀՀ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	ք. Երևան, Վարդանանց 110
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ Կամո մ/ճ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 16021100146800	Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 08402753	ՀՎՀՀ 01548908
Ռեկտոր_____ Ռ. Խ. Հակոբյան	Տնօրեն_____ Գ. Ղարիբյան
Կ.Տ ստորագրություն 31.05.2019թ	Կ.Տ ստորագրություն

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«31» մայիսի 2019թ. կնքված
«ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	30197622	Թուղթ Pioneer	Պորտուգալիա, Նավիգատոր Քոմպանի	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, A+ դասի, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ., 1 տուփի մեջ առկա է 500 հատ թուղթ (ընդամենը 170 տուփ)	կգ	800	340000	425	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	425	30/06/2019թ
2	30197644	Թուղթ Discovery	Պորտուգալիա, Նավիգատոր Քոմպանի	թուղթ A4, 70գր/մ, (297 x 210 մմ) C դասի կամ համարժեք, մեկ տուփի մեջ 500 հատ օգտագործվում է սևագրի համար պատճենահանման համար (ընդամենը 12 տուփ)	կգ	820	21484	26,20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	26,20	30/06/2019թ
5	30192740	Թուղթ Sinar Spectra	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Գունավոր թուղթ, A4, 80 գր/մ, 500 հատանոց, բաց կապույտ գույնի (ընդամենը 5 տուփ)	կգ	1900	23750	12,5	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	12,5	30/06/2019թ
6	30199420	Թուղթ Stick Notes	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թերթիկներ նշումների համար, կպչուն, 50 x 50մմ, 400 թերթ, 5 գույն	հատ	500	25000	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	50	30/06/2019թ
7	30199410	Թուղթ Label	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թուղթ ինքնակպչուն հիմքով, A4 (210x297 մմ) ձևաչափի, սպիտակ	հատ	60	12000	200	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	200	30/06/2019թ
8	30199410	Թուղթ Label	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թուղթ ինքնակպչուն հիմքով, A4 (210x297 մմ) ձևաչափի, սպիտակ, 12 մասի բաժանումով	հատ	60	12000	200	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	200	30/06/2019թ
12	30197621	Թուղթ Siner Line	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թուղթ ֆլիպչարտի համար "Master" 810x585 մմ, 25 թերթ, կամ համարժեք (ընդամենը 3 տուփ)	կգ	3800	14060	3,70	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	3,70	30/06/2019թ
15	30199280	Ծրար Enverlope	ՌԴ	Ծրար սպիտակ C6 (114*162մմ) ինքնասոսնձվող	հատ	10	3000	300	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	300	30/06/2019թ
16	39263200	Գրասենյակայ ին գիրք Register Book	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Գրասենյակային գիրք FIS, մատյան (A4, 3Q, վանդակավոր), 144 էջ, սպիտակ էջերով	հատ	2200	22000	10	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	10	30/06/2019թ

18	30197112	Կարիչի ասեղ Kangaro	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Կարիչի մետաղալարե կապեր N 24/6	տուփ	150	3000	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ
19	30197111	Կարիչի ասեղ Kangaro	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Կարիչի մետաղալարե կապեր N10	տուփ	70	1400	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ
20	39263410	Ամրակ DL	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, 28 մմ երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ:	տուփ	90	1800	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ
22	30192710	Սոսինձ Glue Stick	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), 15գր., թուղթ սոսնձելու համար:	հատ	250	25000	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	100	30/06/2019թ
23	30192100	Ռետին Eraser	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Ռետին՝ փոքր, , նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար:	հատ	80	2400	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	30/06/2019թ
26	30192121	Գրիչ Gello	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Գնդիկավոր, կապույտ գույնի	հատ	70	14000	200	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	200	30/06/2019թ
27	30192121	Գրիչ Gello	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Գնդիկավոր, կարմիր գույնի	հատ	70	1400	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ
29	30192125	Մարկեր Skyglory	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	ընդգծող Amos Dry,կամ համարժեք, տարբեր գույների	հատ	145	7250	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	50	30/06/2019թ
30	30192125	Մարկեր Skyglory	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Մարկեր, սպիտակ մագնիսական գրատախտակին գրելու համար, տարբեր գույների	հատ	170	3400	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ
31	30192920	Ուղղիչ վրձինով Berlingo	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Սպիտակեցնող ջնջիչ, վրձնով 20մլ	հատ	180	7200	40	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	40	30/06/2019թ
32	30192131	Մատիտ Skyglory	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	մատիտ, գրաֆիտե միջուկով, սև, սրած, ռետինե ջնջոցով	հատ	80	9600	120	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	120	30/06/2019թ
33	30197235	Թղթապանակ Alba Rado	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թղթապանակ-ռեգիստր կոշտ ստվարաթղթե կազմով, երկօղականի , հաստությունը 80 մմ, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար:	հատ	600	30000	50	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	50	30/06/2019թ
34	22851200	Թղթապանակ Folfer	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թղթապանակ-ծրար պոլիէթիլային	հատ	100	3000	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	30/06/2019թ
35	30197230	Թղթապանակ File Folder	ՀԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թղթապանակ պոլիմերային թաղանթներով / ֆայլերով/ A4, 30 թերթ	հատ	320	6400	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ

36	30197230	Թղթապանակ File Folder	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թղթապանակ պոլիմերային թաղանթներով / ֆայլերով/ A4, 80 թերթ	հատ	700	14000	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ
37	30197233	Թղթապանակ	ՀՀ	Թղթապանակ թելով, սպիտակ, կավճած ստվարաթղթից	հատ	80	8000	100	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	100	30/06/2019թ
38	30197231	Ֆայլ Impulse	ՀՀ«Իմպուլս Ա» ՍՊԸ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, 50 միկրոն, արագակարներին ամրացնելու հնարավորություն:	հատ	10	30000	3000	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	3000	30/06/2019թ
39	30197232	Արագակար	ՀՀ	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:	հատ	70	35000	500	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	500	30/06/2019թ
40	22811130	Տետր Scarlet	ՀՀ	Տետր աշակերտական, 12 էջ կանաչ կազմով (տողանի)	հատ	30	84000	2800	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	2800	30/06/2019թ
44	30192114	Թանաք Horse	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Թանաք կնիքի 30 մլ	հատ	140	700	5	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	5	30/06/2019թ
45	39292510	Քանոն Ruler	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Քանոն գրասենյակային պլաստմասյե, 30 սմ	հատ	80	2400	30	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	30	30/06/2019թ
48	22811150	Նոթատետր Legal Pad	ՉԺՀ «YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO» LTD	Նոթատետր տողանի, առանձնացվող էջերով, A5 ֆորմատի, 40 էջ, դեղին	հատ	170	3400	20	ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1	20	30/06/2019թ

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ շնորհված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
« 31 » մայիսի 2019թ. կնքված
«ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30197622	Թուղթ Pioneer						340000	340000	340000	340000	340000	340000	340000	340000
2	30197644	Թուղթ Discovery						21484	21484	21484	21484	21484	21484	21484	21484
5	30192740	Թուղթ Sinar Spectra						23750	23750	23750	23750	23750	23750	23750	23750
6	30199420	Թուղթ Stick Notes						25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000
7	30199410	Թուղթ Label						12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
8	30199410	Թուղթ Label						12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
12	30197621	Թուղթ Siner Line						14060	14060	14060	14060	14060	14060	14060	14060
15	30199280	Ծրար Enverlope						3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
16	39263200	Գրասենյակային գիրք Register Book						22000	22000	22000	22000	22000	22000	22000	22000
18	30197112	Կարիչի ասեղ Kangaro						3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
19	30197111	Կարիչի ասեղ Kangaro						1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400
20	39263410	Ամրակ DL						1800	1800	1800	1800	1800	1800	1800	1800
22	30192710	Սոսինձ Glue Stick						25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000

23	30192100	Ռետին Eraser						2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400
26	30192121	Գրիչ Gello						14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000
27	30192121	Գրիչ Gello						1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400
29	30192125	Մարկեր Skyglory						7250	7250	7250	7250	7250	7250	7250	7250
30	30192125	Մարկեր Skyglory						3400	3400	3400	3400	3400	3400	3400	3400
31	30192920	Ուղղիչ վրձինով Berlingo						7200	7200	7200	7200	7200	7200	7200	7200
32	30192131	Մատիտ Skyglory						9600	9600	9600	9600	9600	9600	9600	9600
33	30197235	Թղթապանակ Alba Rado						30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000
34	22851200	Թղթապանակ Folfer						3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
35	30197230	Թղթապանակ File Folder						6400	6400	6400	6400	6400	6400	6400	6400
36	30197230	Թղթապանակ File Folder						14000	14000	14000	14000	14000	14000	14000	14000
37	30197233	Թղթապանակ						8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
38	30197231	Ֆայլ Impulse						30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000
39	30197232	Արագակար						35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000
40	22811130	Տետր Scarlet						84000	84000	84000	84000	84000	84000	84000	84000
44	30192114	Թանաք Horse						700	700	700	700	700	700	700	700
45	39292510	Քանոն Ruler						2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400
48	22811150	Նոթատետր Legal Pad						3400	3400	3400	3400	3400	3400	3400	3400

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ